ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/357

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
Մասնակից՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հակահրդեհային համակարգի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21496-2021 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական վերահսկողական ծառայության 23.12.2021թ.-ի թիվ Ե/1598-21 գրության հիման վրա, 27.12.2021թ.-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.12.2021թ.-ին:

29.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/357 համարի ծածկագիրը:

11.01.2022թ.-ին և 26.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.01.2022թ.-ին:

2. <u>ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 23.12.2021թ.-ի թիվ Ե/1598-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայության 2022 թվականի կարիքների համար հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով 01.12.2021թ. հայտարարված «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) արձանագրել է, որ հայտ ներկայացրած բոլոր 3 մասնակիցների՝ «Էլիպս Ջիէյ», «Ջի-Էս-Սի», «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ների փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին, մասնավորապես Հավելված 1.1-ում.

- *առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը,*
- *ներկայացված որոշ ապրանքների նկարագրերում լրացված չեն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը՝ Հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և մասնակիցներին՝ «Էլիպս Ջիէյ», «Ջի-Էս-Սի» «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ներին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ծանուցում՝ սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օր) փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին:

Հանձնաժողովը, վերսկսված նիստում, արձանագրել է, որ «Էլիպս Ջիէյ», «Ջի-Էս-Սի», «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, սակայն, «Էլիպս Ջիէյ» և «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերում ոչ բոլոր անհամապատասխանություններն են շտկվել, մասնավորապես.

1. «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1).

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետը հստակ ներկայացված չէ, օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք),

բ) տագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 2 կապի գիծ),

գ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178o),

2. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) .

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետը հստակ ներկայացված չէ, օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք),

բ) հասցեական լուսաձայնային ազդասարքի տագնապային համակարգի ձայնային ազդանշանի ուժգնությունը հստակ ներկայացված չէ (առնվազն՝ 80 դԲ),

գ) փագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 3000 մետր),

դ) պահուստային սնուցման աղբյուր 4.5 Ա-ի նկարագրությունը հստակ չէ (ոչ ավելի քան 35 Վտ),

ե) պահուստային սնուցման աղբյուրի նկարագրությունը հստակ չէ (առնվազն 2 ելք),

զ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178օ):

Արդյունքում, Հանձնաժողովը «Էլիպս Ջիէյ» և «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ների ներկայացրած փաստաթղթերը գնահատել է անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետի համաձայն:

Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ ուղարկում ենք «Էլիպս Ջիէյ» և «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ների տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու անհրաժեշտության հարցը քննարկելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.12.2021թ.-ի գրությամբ դիմել է «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21496-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

10.01.2022թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով 01.12.2021 թվականին հրապարակել է թիվ «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից) և ճանաչվել ընտրված մասնակից:

1.3. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, ընդ որում հստակ չնշելով թե կոնկրետ որ ապրանքի, որ նկարագրում ինչ անհամապատասխանություններ են առկա, այլ վերացական նշելով հետևյալը, որ

- *Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը,*
- *Ներկայացված որոշ ապրանքների նկարագրերում լրացված չեն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:*

1.4. Մասնակցի կողմից կատարվել են այն բոլոր ենթադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումները, որոնք չեն համապատասխանել հրավերի պահանջներին, սակայն Պատվիրատուն դրանից հետո հստակ մատանշել և արձանագրել է որոշակի անհամապատասխանություններ, որոնք չեն շտկվել, չեն համապատասխանում հրավերի հավելված 1.1-ի պահանջներին և Մասնակցի հայտը մերժել է հետևյալ հիմնավորմամբ: «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրում՝

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետ հստակ ներկայացված չէ օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք),

բ) հասցեական լռաձայնային ազդասարքի տագնապային համակարգի ձայնային ազդանշանի ուժգնությունը հստակ ներկայացված չէ (առնվազն՝ 80դԲ), գ) տագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 3000 մետր),

դ) պահեստային սնուցման աղբյուր 4.5 Ա-ի նկարագրությունը հստակ չէ (ոչ ավելի քան 35 Վտ),

ե) պահուստային սնուցման աղբյուրի նկարագրությունը հստակ չէ (առնվազն 2 ելք),
զ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178°):

1.5. Հիմք ընդունելով վերոգրյալի վերաբերյալ Պատվիրատուի գրությունը ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է Մասնակցին գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է ւիաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսինքն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում նոր միայն կարելի է ւիաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորությունների իրականացման նպատակով Օրենսդիրը Կարգի 41-րդ կետով նախատեսել է մասնակցիների հայտի հրավերի պահանջներին անհամապատասխանության արձանագրման դեպքում գնման գործընթացի կասեցման և արձանագրված անհամապատասխանության շտկման հնարավորություն, որի չկատարումը նոր միայն նույն կարգի 42-րդ կետի հիմքով կարող է առաջացնել հայտի մերժման իրավական հիմքեր: Ընդ որում կարգի 41-րդ կետի համաձայն Պատվիրատուն է կրում անհամապատասխանության արձանագրման, մեկ աշխատանքային օրով նիստի կասեցման և Մասնակցին արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցելու պարտականություն, ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին: Քանզի Պատվիրատուի արձանագրային որոշումը ինքնին հանդիսանում է իրավական ակտ, ապա պետք է համապատասխանի իրավական որոշակիության Սահմանադրական պահանջներին (ՀՀ Սահմանադրություն հոդված 6-րդ մաս 2-րդ), որպեսզի մասնակիցը կարողանա համապատասխանեցնել իր վարքագիծը առաջադրված պահանջին, նշվածը բխում է նաև գնման ընթացակարգի սկզբունքներից, մասնավորապես գնման ընթացակարգի թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական մոտեցումներով իրականացումից:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրել է ենթադրյալ անհամապատասխանություններ անորոշ մեկնաբանություն-ներով, մասնավորապես նշել է, որ նախ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը, և երկրորդ ներկայացված որոշ ապրանքների նկարագրերում լրացված չեն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը: Ընդ որում նշված արձանագրումը վերաբերվում էր գնման ընթացակարգի բոլոր

մասնակիցներին և անհասկանալի է կոնկրետ, որ մասնակցի, որ հայտնում ինչ անհամապատասխանություն է արձանագրված, ուստի առկա անորոշությունը ստեղծել է Մասնակցի պարտավորությունների կատարման անհնարինություն:

Հատկանշական է այն հանգամանքը, որ երբ Մասնակիցը ներկայացրել է հայտի շտկված տարբերակ Պատվիրատուն արդեն հստակ արձանագրել է առկա ենթադրյալ անհամապատասխանությունները, եթե Պատվիրատուն գործում էր թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական մոտեցումներով, ապա ինչն էր խանգարում նախապես հստակ արձանագրել բոլոր այն անհամապատասխանությունները, որոնք նա տեսնում էր: Իրավական անորոշությամբ կազմված արձանագրային որոշմամբ Պատվիրատուն Մասնակցին հստակ չի առաջադրել շտկման ենթակա այն բոլոր պահանջները որոնք պետք է կատարվեն, ուստի Պատվիրատուի կողմից այնուհետ արձանագրել դրանց չշտկման փաստը՝ իրավաչափ չէ, սույն պարագայում խոսք լինել չի կարող Մասնակցի կողմից Կարգի 41-րդ կետի պահանջների չկատարման և 42-րդ կետի կիրառման մասին, քանզի Պատվիրատուն իրավասու է պահանջել շտկելու միայն այնպիսի անհամապատասխանություններ, որոնք չեն համապատասխանում հրավերի պահանջներին (նշվածի վերաբերյալ հիմնավորումները կներկայացվեն ստորև), որով պայմանավորված պետք է փաստել, որ Մասնակիցը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները:

Երկրորդ Պատվիրատուն Մասնակցի հայտը մերժելով Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ նշել է, որ Մասնակցի հայտը չի համապատասխանում Հրավերի հավելված 1.1 պահանջներին: Հրավերի հավելված 1.1-ը նույնպես ունի բազմաթիվ դրույթներ և այս դեպքում նույնպես Պատվիրատուն չի նշել թե՞ որ պահանջն է Մասնակցի կողմից խախտվել: Պատվիրատուի տված մեկնաբանությունից կարելի է փաստել, որ Մասնակցի հայտը ենթադրաբար չի համապատասխանում Հրավերի հավելված 1.1 առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրին, սակայն պետք է նշեմ, որ Հրավերի հավելված 1.1 չունի այնպիսի պահանջ, որ պետք է հստակ նշվեն առաջարկվող ապրանքների հզորություններն ու հնարավորությունները, այլ նշված է որ դրանք պետք է համապատասխանեն որոշակի նվազագույն պահանջների, որով պայմանավորված Մասնակիցը ներկայացրել է հայտ, նշելով, որ իր կողմից մատակարարվող ապրանքները կհամապատասխանեն առաջադրված նվազագույն պահանջներին:

Որևէ ապրանքի հզորությունների և հնարավորությունների վերաբերյալ պահանջը ներկայացնելուց առաջ, նախ պետք է Պատվիրատուն Հրավերի հավելված 1.1 առաջարկվող ապրանքի տեխիկական բնութագրում կամ այն լրացնեու ծանոթագրությամբ նշեր, որ անհրաժեշտ է հստակ սահմանել դրանք, որի պարագայում նոր միայն իրավասու կլիներ արձանագրել դրանց անհամապատասխանություն, բացի այդ հստակ մատանանշելու պահանջ ներկայացնելուց առաջ պետք է ուսումնասիրման առարկա դարձնել այդ ապրանքի առանձնահատկությունները և խորհրդակցել հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձանց հետ: Պատվիրատուի արձանագրված ենթադրյալ անհամապատասխանությունները իրավաչափ չեն երկու հիմքով նախ դրանք չեն հակասում Հրավերի հավելված 1.1 որևէ պահանջի և մատակարարման ենթակա ապրանքների հանձնման-ընդունման պահին նոր միայն Պատվիրատուն կարող էր գնահատական տալ այդ ապրանքների հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Երկրորդ չնայած այն հանգամանքի, որ ստորև թվարկված ոչ հստակ բառերը նշելու պահանջը չի բխում Հրավերի հավելված 1.1-ից այնուամենայնիվ նշեմ, որ ներկայացված պահանջը հիմնավոր չէ ելնելով ապրանքների առանձնահատկությունից, մասնավորապես.

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետ հստակ ներկայացված չէ օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք): Երաշխիքային ժամկետը սահմանվում է արտադրող կազմակերպության կողմից և այն իրականության մեջ կարող է լինել ավելի երկար, որ ոչ մի կերպ չի վկայում Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման մասին, այլ հակառակը երաշխիքային առավել երկար ժամկետը ի նպաստ Պատվիրատուի է: Երաշխիքային ժամկետը կարող է նույն ապրանքի տարբեր չափաքանակների համար սահմանվել տարբեր և դրա հստակ մատանանշումը մինչև ապրանքի ձեռք բերումը հնարավոր չէ, սույն դեպքում կարևոր է և Հրավերի հավելված 1.1-ից և բխում, որ այն առնվազն պետք է ունենա 1 տարվա երաշխիք, որը գնահատման է ենթակա պայմանագրի կատարման փուլում, ապրանքները մատակարարելու ժամանակ: բ) հասցեական լռաաձայնային ազդասարքի տագնապային համակարգի ձայնային ազդանշանի ուժգնությունը հստակ ներկայացված չէ (առնվազն՝ 80դԲ): Ձայնային ազդանշանի ուժգնությունը հաստատուն միավոր չէ, այն ունի տատանումների սահմանարափ, որը կարող է պայմանավորվել ընդհուպ եղանակային պայմաններով, սույն դեպքում կարևոր է, որ այն առնվազն լինի 80դԲ, որը կբխի Հրավերի հավելված 1.1-ի պահանջներից և գնահատման ենթակա կլինի պայմանագրի կատարման փուլում:

գ) փագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 3000 մետր): Սույն դեպքում Պատվիրատուի դիրքորոշումը առնվազն անհասկանալի է, որից կարելի է ենադրել, որ եթե նշվի դիցուկ հստակ 3010 մետր, ապա փագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի մինչև 3020 մետր կամ 3005 մետր հեռավորությամբ կառավարման հնարավորություն ունեցող մատակարարվող ապրանքը չի համապատասխանի պայմանագրին: Ուստի ապրանքի տեխնիկական բնութագրում առնվազն 3000 մետրի սահմանումը բխում է Հրավերի հավելված 1.1-ի պահանջներից և գնահատման ենթակա կլինի պայմանագրի կատարման փուլում: դ) պահեստային սնուցման աղբյուր 4.5 Ա-ի նկարագրությունը հստակ չէ (ոչ ավելի քան 35 Վտ): Սույն դեպքում նույնպես պետք է փաստել, որ պահեստային սնուցման աղբյուր 4.5 Ա-ի Վտ հնարավորությունը նույնպես չի կարող լինել հաստատուն միավոր պայմանավորված ապրանքի առանձնահատկություններով, կարևոր է, որ այն լինի ոչ ավելի քան 35 Վտ, որը կբխի Հրավերի հավելված 1.1-ի պահանջներից և գնահատման ենթակա կլինի պայմանագրի կատարման փուլում:

ե) պահուստային սնուցման աղբյուրի նկարագրությունը հստակ չէ (առնվազն 2 ելք): Սույն դեպքում արտադրվող ապրանքը տարբեր ժամանակահատվածներում կարող է արտադրվել ելքերի տարբեր հնարավորություններով, որը մատակարարման պահին նոր միայն գնահատման ենթակա կլինի և Պատվիրատուի համար պետք է կարևոր լինի, որ այն ունենա առնվազն 2 ելք և դրա անհամապատասխանությանը կարող է անդրադառնալ միայն կատարման փուլում:

զ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178°): Սույն դեպքում Պատվիրատուի դիրքորոշում նույնպես անտրամաբանական է, քանզի եթե հայտնում նշվի դիտման անկյունը 180°, ապա չի կարող մատակարարվել օրինակ 270° դիտման անկյուն ունեցող մոնիտոր և դա չի բխի հրավերից կամ պայմանագրից: Այս դեպքում մոնտիորի դիտման անկյան համար սահմանված է նվազագույն պայման, որին գնահատական կարող է տրվել նույնպես պայմանագրի կատարման փուլում:

Առաջնորդվելով վերոգրյալով պետք է ւիաստել, որ Մասնակիցը գնման նթացակարգի շրջանակում թույլ չի տվել ստանձնած պարտավորությունների խախտում, իր կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, Պատվիրատու արձանագրած մեջբերումը, որ պետք է ապրանքների հզորությունների և հնարավորությունների տիրույթները հստակ նշվեն չի բխում Հրավերի հավելված 1.1-ի

պահանջներից, քանզի այնտեղ առկա է ոչ թե հստակ նշելու պահանջ, այլ նվազագույն պայմաններին համապատասխանելու պահանջ, որին համապատասխան էլ Մասնակիցը ներկայացրել է իր հայտը: Պատվիրատուի կողմից արձանագրված ենթադրյալ անհամապատասխանությունները ոչ իրավաչափ են, քանզի իրականում առակա չէ անհամապատասխանություն և բացի այդ անորոշ մեկնաբանմամբ է արձանագրել անհամապատասխանությունները և Մասնակցին հստակ չի ծանուցել արձանագրված բոլոր անհամապատասխանությունների մասին, այլ վերացական Գնման ընթացակարգին մասնակցած բոլոր մասնակիցների մոտ արձանագրած անհամապատասխանությունները անորոշ մեկնաբանությամբ նշել է ընդհանուր, որից անհասկանալի է, թե1 ում ինչ պահանջ է ներկայացված: Ուստի գտնում եմ, որ Մասնակցի վարքագծում «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առկա չեն ստանձնած պարտավորությունների խախտման դեպքեր, և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը փաստարկված և իրավազուրկ է:»:*

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությունը «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/357 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով 01.12.2021թ.-ին հայտարարվել է «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2022 թվականի կարիքների բավարարման համար՝ հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2021 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 14:00-ին:

v. Նույն արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը, ներկայացված որոշ ապրանքների նկարագրերում լրացված չեն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:

vi. Արձանագրության 4.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.12.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի biznessellit@mail.ru էլ. փոստի հասցեին:

viii. Հանձնաժողովի 17.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ, «Ջի-Էս-Սի», «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, սակայն «Էլիպս Ջիէյ» և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերում ոչ բոլոր անհամապատասխանություններն են շտկված, մասնավորապես.

«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ- ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1).

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետը հստակ ներկայացված չէ, օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք),

բ) տագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 2 կապի գիծ),

գ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178°),

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) .

ա) հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագրում երաշխիքային ժամկետը հստակ ներկայացված չէ, օգտագործված է «առնվազն» բառը (համակարգի գործարկումից սկսած առնվազն 1 տարվա երաշխիք),

բ) հասցեական լուսաձայնային ազդասարքի տագնապային համակարգի ձայնային ազդանշանի ուժգնությունը հստակ ներկայացված չէ (առնվազն՝ 80 դԲ),

գ) տագնապի ընդունման և կառավարման հասցեական վահանակի վերաբերյալ տրված է տիրույթով նկարագիր (առնվազն 3000 մետր),

դ) պահուստային սնուցման աղբյուր 4.5 Ա-ի նկարագրությունը հստակ չէ (ոչ ավելի քան 35 Վտ),

ե) պահուստային սնուցման աղբյուրի նկարագրությունը հստակ չէ (առնվազն 2 ելք),

զ) մոնիտորի դիտման անկյունը հստակ նկարագրված չէ (դիտման անկյունը՝ ոչ պակաս քան 178°):

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Էլիպս Ջիէյ» և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ների ներկայացրած փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել: Համապատասխան փաստաթղթերն ուղարկել լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննարկելու համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 27.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21496-2021 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով 01.12.2021թ.-ին հայտարարված «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն

հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից հակահրդեհային համակարգի ձեռքբերման նպատակով 01.12.2021թ.-ին հայտարարված «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը, ներկայացված որոշ ապրանքների նկարագրերում լրացված չեն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 17.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետով արձանագրել է, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից կրկին ներկայացրած հավելված 1.1-ով կրկին չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, որպիսի պայմաններում Հանձնաժողովը որոշել է «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հստակ ներկայացված չեն եղել՝ օգտագործվել են «առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան» բառերը, որը Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության հիման վրա ենթակա էր շտկման (հստակեցման), ինչը Մասնակցի կողմից չի շտկվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21496-2021 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2021/357 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**